Արձանագրություն N 3

ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Արագածի Կոմունալ ծառայություն ՀՈԱԿ-ի կարիքների համար ԱՄ-ԱՀԱԿԾ-ՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/05 - ծածկագրով գնանշման հարցումով գնման բանակցությունների ամփոփման նիստի մասին

Ք.Ապարան ***«15» Մարտի 2018թ.***
ժ 12:00

Մասնակցում էին՝

Գնահատող Հանձնաժողովի նախագահ՝ Աղաբեկ Մկրտչյան – Մեխանիզատոր- եռակցող

Հանձնաժողովի անդամներ՝

Արթուր Խալաթյան – տրակտորիստ - կոմբայնավար

Սամվել Գալստյան- Աղբահավաք բանվոր

Գնումները համակարգող՝ Միհեր Ամիրյան

Օրակարգ

1. Գների նվազեցման բանակցություններին անցակացման մասին

1. Ընդունել ի գիտություն, որ համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 39-րդ կետի 5-րդ ենթակետի՝ ԱՄ-ԱՀԱԿԾ-ՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/05 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում անցկացվող գնային առաջարկների նվազեցման բանակցություններին ծանուցված մասնակիցներից ոչ մեկ չի ներկայացել:

2 . ԱՄ-ԱՀԱԿԾ-ՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/05 ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներ հայտարարելու մասին

2.1 Հիմք ընդունելով բանակցության արդյունքները՝ հանձնաժողովը որոշեց Չափաբաժին 1-ի համար 1-ին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել «Տիգրան Պողոսյան» Ա/Ձ -ին՝ որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

2.2 Համաձայն ՝"Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի Չափաբաժին 2-ի համար ընթացակարգը համարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ - 0:

3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին ծանուցելու մասին

3.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 15.03.2018թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

3.2 15.03.2018թ ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև իր կողմից առաջարկվող ապրանքների անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը՝ համաձայն հրավերի 6.1 հավելվածի:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ 0:

4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 3-րդ կետում նշված փաստաթղթերի ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 13:00-ին, ք.Ապարան, Բաղրամյան 26 հասցեում:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Սամսոն Շահինյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Սանամ Մեդոյան

_____ Դերենիկ Ղամբարյան

Գնումները համակարգող ՝ _____ Միեր Ամիրյան